# 510

1. Ուզում եմ Հոգով ես ապրել,
Բայց կոտրած են սիրտս ու հոգիս,
Հոգուս փափագն է՝ Աստծուն սիրել
Մաքուր սրտով ու ամբողջ կյանքով:

Իմ անգի՛ն, իմ թանկագի՛ն,
Դու ես կյանքիս Փրկիչը, Տերը,
Չեմ մոռանա ես երբեք Քո սերը,
Կնվիրեմ Քեզ իմ երգերը,
Քոնն են սիրտս ու հոգիս,
Դու ես Տերը իմ:

2. Ընտրել եմ Քեզ՝ Փրկիչ ու Տեր,
Հիսո՛ւս Քրիստոս, Աստծո Որդի,
Քեզ եմ նվիրում սիրտս ու հոգիս
Եվ այն ամենը, որ տվել ես ինձ:

3. Բայց ես հավետ ընտրել եմ Քեզ՝
Կյանքիս Փրկիչ ու հոգուս Տեր,
Հոգիս ցնծում է, ուրախ եմ միշտ,
Ո՞վ կարող է ինձ զրկել Քեզնից: